1843 - 1901

ՕԳՈՍՏՈՍ 1

# ԲԱԶՄԱՎԷՊ

## ՅԱՒԵԼՈՒԱԾ



## ՀԱՆԴԷՍ
## ՄԽԻԹԱՐԵԱՆ ՅՈԲԵԼԻՆԻ

Նոր տոմարի սեպտեմբեր 8ին պիտի կատարուի Վենետկոյ Մխիթարեան ուխտիս երկհարիւրամեայ յոբելեան հանդէսը՝ որ պիտի տեւէ երկու օր:

### ԱՌԱՋԻՆ ՕՐ

1․ Առաւօտեան ժամը 10½ին Ուխտիս Գեր․ Աբբահայր Տ․ Տ․ Իգնատիոս Վ․ Կիւրեղեան պիտի պատարագէ երաժըշտական գործւով և խմբերգով:

digitised by A.R.A.R.@

2. Պատարագէն վերջը երաժշտական խումբը պիտի երգէ «Զքեզ Աստուած» քառաձայն գոհաբանական աղօթքը։

3. Կէսօրին ժամը 2ին ամբողջ հրաւիրելոց պիտի տրուի Մեծ ճաշ։

4. Ճաշկերոյթի ժամանակ պիտի կարդացուին ոտանաւորներ, նամակներ, հեռագիրներ. և պիտի բաժնուի Մխիթար Աբբահօր մետալը։

5. Երեկոյեան, Լուսավառութիւն. վանքին քառանկիւնը պիտի զարդարուի վենետկեան յատուկ գունագեղ լապտերներով։

## ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

1. Առաւօտեան ժամը 10ին Ուխտիս Գեր. Աբբահայր պիտի բանայ Ակադեմական հանդէսը։

2. Աւագ քահանաներէն մին պիտի կարդայ համառօտ ատենաբանութիւն մը։

3. Երաժշտական խումբը պիտի նուագէ յատուկ երգեր։

4. Ընդ մէջ երգերու պիտի կարդացուին մաղթանքներ, հեռագիրներ և նամակներ։

5. Հրաւիրեալ հանդիսականաց պիտի տրուի «Մխիթար» անուամբ բացառիկ պատկերազարդ գիրք մը։

6. Կէսօրին Ճաշ։

7. Երեկոյեան՝ հանդիսաւոր հիմնարկութիւն Մխիթար Աբբահօր կանգնուելիք արձանին* և ապա երկարատեւ առաջնակարգ վենետկեան հրախաղութիւն։

* Որուն ծրագրի պատկերն՝ յաջորդ «Բազմավէպ»ով պիտի յղենք բարեկամաց և բաժանորդաց։

digitised by A.R.A.R.@